ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ

Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության նախագահի
10 ապրիլի 2024 թվականի N 44-Լ կարգադրությամբ

Առևտրի/սպասարկման կետերի կողմից քարտերը որպես վճարման միջոց ընդունելու ծառայության կանոններ

Պատասխանատու ստորաբաժանում	Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրինության Պրոդուկտների մշակման բաժին
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	15.04.2024թ-ից:
Առնչվող փաստաթղթեր	«Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի բանկային հաշիվների բացման և սպասարկման» կանոններ

Բովանդակություն

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿ 3
ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3
ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 5
ԳԼՈՒԽ 4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ և ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳ 6
ԳԼՈՒԽ 5. ՋԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 8
ԳԼՈՒԽ 6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 10
ԳԼՈՒԽ 7.ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ 16
ԳԼՈՒԽ 8. ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ 17
ԳԼՈՒԽ 9. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 17
ԳԼՈՒԽ 10. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ) 19
ԳԼՈՒԽ 11. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ 19
ԳԼՈՒԽ 12. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ 19

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿ

1. Սույն փաստաթղթի նպատակն է սահմանել Բանկի կողմից Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրված Տերմինալների տրամադրման, սպասարկման և սույն կանոններով նախատեսված այլ գործառնությունների կազմակերպման և իրականացման ընդհանուր պայմանները:

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

2. Սույն կանոններում օգտագործվող սահմանումներն ու հապավումներն ունեն հետևյալ նշանակությունը.

1) **Բանկ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ,
2) **ԱՍԿ՝** Ապրանքների վաճառքի և/կամ ծառայությունների մատուցման առևտրի/սպասարկման կետ (այդ թվում առցանց տիրույթում գործող էլեկտրոնային ԱՍԿ),
3) **Կողմեր՝** Բանկը և ԱՍԿ-ն միասին,
4) **Քարտ (Քարտեր)՝** Պայմանագրի շրջանակներում Բանկի կողմից սպասարկվող վճարային համակարգերի քարտեր, որոնցով հնարավոր է իրականացնել անկանխիկ վճարում,
5) **Քարտապան՝** անձ, ով ԱՍԿ-ում վճարումներ իրականացնելու համար օգտագործում է Քարտ,
6) **Պրոցեսինգային կենտրոն՝** «Արմենիան Քարդ» ՓԲԸ, որն իրականացնում է գործարքների հավաստագրում, ֆինանսական մշակում և փոխհաշվարկներ,
7) **POS տերմինալ՝** Քարտ սպասարկող ֆիզիկական սարքեր, որոնց միջոցով ԱՍԿ-ն ընդունում է անկանխիկ վճարումներ,
8) **ՀԴՄ՝** Հսկիչ դրամարկղային մեքենա, որի վրա Բանկի կողմից ակտիվացված է քարտի միջոցով վճարումներ կատարելու հնարավորություն,
9) **SoftPOS հավելված՝** հավելված, որը նախատեսված է «Android 8.1 և բարձր օպերացիոն համակարգերով սարքերի համար, որը հնարավորություն է տալիս սմարթֆոնի և/կամ պլանշետի միջոցով ընդունել քարտային վճարումներ անհպում եղանակով,
10) **VPOS (Վիրտուալ POS տերմինալ)՝** Բանկի կողմից տրամադրվող ծառայություն, որով Բանկն ապահովում է ԱՍԿ-ի կողմից ինտերնետային կայքի կամ բջջային հավելվածի միջոցով ապրանքների վաճառքի և/կամ ծառայությունների մատուցման դիմաց քարտով վճարումների ընդունումը,
11) **ArCalink՝** Առևտրի/սպասարկման կետերում ArCalink ծառայության միջոցով հղման կամ QR կոդի ձևավորմամբ վճարային քարտերի միջոցով անկանխիկ վճարման ընդունման հնարավորություն,
12) **Տերմինալ՝** POS տերմինալ, ՀԴՄ տերմինալ, SoftPOS հավելված, VPOS և ArCalink,
13) **Ծառայություն՝** Բանկի կողմից տրամադրվող ծառայություն, որով Բանկն ապահովում է ԱՍԿ-ում ապրանքների վաճառքի և (կամ) ծառայությունների մատուցման դիմաց քարտով անկանխիկ վճարումների ընդունումը և դրանց հաշվարկների կատարումը,

14) **Բանկ-հաճախորդ համակարգ՝** առցանց հարթակ՝ «IDBusiness» համակարգ, Բանկի հաճախորդին իր հաշիվներով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվության դիտման և/կամ գործարք (այդ թվում՝ գործարքի հետ առնչվող գործողություններ) կատարելու հնարավորություն ստեղծող համակարգ,
15) **էլեկտրոնային ստորագրություն՝** e-sign համակարգի օգտագործման միջոցով կազմված ստորագրության, որը օգտագործվում է ԱՍԿ կողմից Բանկի հետ իրավահարաբերությունների ընթացքում, նշված ստորագրության օգտագործումը համարժեք է ԱՍԿ ներկայացուցչի կողմից ձեռագիր ստորագրությանը, իսկ այս եղանակով ստորագրված փաստաթղթերը համարվում են պատշաճ ստորագրված,
16) **Վճարային համակարգ՝** Բանկի հետ համագործակցող տեղական և/կամ միջազգային վճարային համակարգ, որի տարբերանշանով թողարկված քարտերն ընդունվում են որպես վճարման միջոց ԱՍԿ-ի կողմից՝ Կողմերի միջև կնքված Պայմանագրի շրջանակներում,
17) **Հավաստագրում՝** Քարտով գործարքի կատարման ընթացքում Պրոցեսինգային կենտրոնից ստացված հաստատում կամ մերժում,
18) **Թողարկող բանկ՝** ԱՍԿ-ներում որպես վճարման միջոց ընդունված Քարտերի թողարկումն իրականացրած կազմակերպություն,
19) **Զեղծարար գործառնություն՝** անձի կողմից երրորդ անձի (ֆիզիկական կամ իրավաբանական) նկատմամբ կատարված անօրինական գործողություններ, որոնց նպատակն է վստահությունը չարաշահելու և անձնական տվյալներ կորզելու միջոցով հափշտակել զգալի չափերի գումար, գույք կամ գույքի նկատմամբ իրավունք,
20) **Միջնորդավճար՝** Պայմանագրով նախատեսված ծառայությունների դիմաց ԱՍԿ-ի կողմից Բանկին վճարվող միջնորդավճար,
21) **Օֆերտա՝** Պայմանագիր կնքելու համար ԱՍԿ-ի կողմից ներկայացված դիմում-հայտ, որը Բանկի կողմից ակցեպտավորվելով՝ Բանկի և օֆերտա ներկայացրած անձի միջև ծագում են պայմանագրային իրավահարաբերություններ,
22) **Ակցեպտ՝** Պայմանագիր կնքելու նպատակով ԱՍԿ-ի կողմից ներկայացված Օֆերտան ակցեպտավորելու (ընդունելու) վերաբերյալ Բանկի կողմից տրամադրված հավաստում,
23) **Պայմանագիր** Բանկի և ԱՍԿ-ի միջև սույն կանոնների պահպանմամբ քարտերը որպես վճարման միջոց ընդունելու պայմանագիր, որը կնքվում է ԱՍԿ-ի կողմից ներկայացված Օֆերտան Բանկի կողմից ակցեպտավորելու միջոցով, իսկ առկայության դեպքում նաև դրանց անբաժանելի մասը հանդիսացող հավելվածներից,
24) **Փոփոխության օֆերտա՝** Բանկի և Հաճախորդի միջև կնքված Պայմանագրում պայմանների և/կամ սակագների փոփոխության դիմում-հայտ/օֆերտա՝ հաստատված Բանկի կառավարման իրավասու մարմնի/անձի կողմից,

25) **Ծանուցում՝** Ծառայության հետ կապված՝ Բանկի կողմից ԱՍԿ-ին տրամադրվող ծանուցումները, նյութերը/փաստաթղթերը, կանոնների փոփոխման մասին տեղեկատվությունը, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ տեղեկատվություն:

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. Պայմանագիրը համարվում է կնքված ԱՍԿ-ի կողմից ներկայացված Օֆերտան Բանկի կողմից Ակցեպտավորելու (այդ թվում՝ դրան կից և անբաժանելի հավելվածները) ԱՍԿ-ի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու օրը: Ընդ որում՝ Բանկի կողմից Ծառայությունները մատուցվում են սույն կետում նշված փաստաթղթերով սահմանված պայմաններով:
4. ԱՍԿ-ի կողմից ներկայացված Օֆերտան և դրա հետ կապված փաստաթղթերը կարող են ԱՍԿ-ի կողմից ստորագրվել էլեկտրոնային ստորագրություն դնելու միջոցով: Բանկի կողմից ԱՍԿ-ին տրամադրվող/ուղարկվող փաստաթղթերը, այդ թվում՝ Պայմանագրեր, համաձայնագրեր և այլ փաստաթղթեր կարող են ԱՍԿ-ին տրամադրվել/ուղարկվել Բանկի իրավասու անձի էլեկտրոնային ստորագրությամբ և Բանկի էլեկտրոնային կնիքով:
5. Բանկում գործող Ծառայությունից արդեն իսկ օգտվող ԱՍԿ-ն կարող է Բանկ-հաճախորդ համակարգով (IDBusiness համակարգ) կամ Բանկում գրանցված էլեկտրոնային հասցեով ուղարկել Փոփոխության դիմում-հայտ (օֆերտա)՝ գործող Պայմանագրով սահմանված պայմանների և սակագների փոփոխության վերաբերյալ, որը Բանկը կդիտարկի որպես ԱՍԿ-ի կողմից պատշաճ ներկայացած Օֆերտա: Ընդ որում, Պայմանագրով սահմանված պայմանների և սակագների փոփոխությունը իրականացվում է սույն կետում նշված փոփոխության դիմում-հայտը (Օֆերտան) Բանկի կողմից ակցեպտավորելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:
6. Դիմում-հայտը (Օֆերտան) Բանկի կողմից ակցեպտավորելու դեպքում Ակցեպտն ուղարկվում է էլեկտրոնային եղանակով՝ ԱՍԿ-ի Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի հասցեին և Պայմանագիրը համարվում է պատշաճ կնքված, իսկ Դիմում-հայտը (Օֆերտան) Բանկի կողմից չակցեպտավորելու դեպքում Բանկը նույն եղանակով ԱՍԿ-ին տեղեկացնում է այդ մասին:
7. Բանկն իր կողմից մատուցվող ծառայությունների համար գանձում է միջնորդավճար՝ Բանկի և ՍՍԿ-ի միջև կնքված Պայմանագրով սահմանված չափով և կարգով:
8. Բանկը փոխանցում է այն գործարքների գումարները, որոնք կատարվել են Պայմանագրին և սույն կանոնների պահանջներին համապատասխան:
9. Սույն Կանոնները, ինչպես նաև ԱՍԿ-ի կողմից քարտերը որպես վճարման միջոց ընդունելու հետ կապված այլ փաստաթղթերը հաստատվում են Բանկի կողմից և կարող են միակողմանիորեն փոփոխվել: Կատարված փոփոխությունների մասին Բանկը ծանուցում է դրանց ուժի մեջ մտնելուց 7 (յոթ) աշխատանքային օր առաջ հետևյալ եղանակներից որևէ մեկով՝ Բանկի տարածքում, ինտերնետային կայքում դրանք հրապարակելու միջոցով, ինչպես նաև ԱՍԿ-ին ծանուցումներ ուղարկելու համար սահմանված հաղորդակցման եղանակով:

10. Պայմանագրի գործողության ընթացքում, ըստ անհրաժեշտության, Ծառայության տրամադրման եղանակը, ինչպես նաև Տերմինալի Ֆ քանակը կարող է փոփոխվել Կողմերի գրավոր համաձայնությամբ:
11. ԱՍԿ-ն համաձայնություն տալով սույն կանոններին ընդունում է, որ շտապ ժամկետով (Պայմանագրի կնքումից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում) Տերմինալի տեղադրման և Տերմինալի սպասարկման լրացուցիչ հնարավորությունները չեն հանդիսանում Պայմանագրի էական պայմաններ և Բանկն իրավասու է մերժել դրանց տրամադրումը:
12. ԱՍԿ-ն, համաձայնություն տալով սույն կանոններին, ընդունում է, որ Տերմինալը սպասարկող հաշվի պայմանագիրը լուծվելու դեպքում ԱՍԿ-ն պարտավորվում է փոփոխել Պայմանագրով սահմանված Տերմինալը սպասարկող հաշվեհամարը՝ Բանկի այլ հաշվեհամարով, հակառակ դեպքում՝ Բանկն իրավունք ունի դադարեցնել տվյալ Տերմինալի սպասարկումը, ընդ որում՝ ԱՍԿ-ն պարտավորվում է վերադարձնել իրեն տրամադրված շարժական տերմինալը դադարեցման վերաբերյալ Բանկի ծանուցումը ստանալուց հետո 3 օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ և ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳ

13. Պայմանագրի ստորագրումից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Բանկը, համաձայնեցված կարգով (համաձայնեցվում է նաև սպասարկման համար նախատեսված սարքերի (այդ թվում՝ էլեկտրոնային վճարման տերմինալի (POS-տերմինալի) տեղադրման վայրը), հանձնում է Տերմինալը, իսկ ԱՍԿ պարտավորվում է ընդունել դրանք, տեղադրել և ապահովել դրանց անխափան աշխատանքի համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներով:
14. ԱՍԿ-ի նախընտրությամբ Քարտերի սպասարկման տեխնիկածրագրային հնարավորությունը տրամադրվում է հետևյալ եղանակներով՝
    1) POS տերմինալի կամ ՀԴՄ-ի միջոցով,
    2) SoftPos տարբերակով՝ Բանկի SoftPos հավելվածի միջոցով,
    3) Վիրտուալ POS տերմինալի կամ ArCalink-ի միջոցով:
15. SoftPos հավելվածի միջոցով վճարումներ ընդունելու համար ԱՍԿ-ն իրեն պատկանող շարժական սարքում ներբեռնում է Բանկի SoftPos հավելվածը, որն ունի NFC (Near-field communication) տեխնոլոգիայի կիրառման հնարավորություն: Ակցեպտը ստանալուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ԱՍԿ-ի կողմից նշված էլեկտրոնային փոստի միջոցով ստացված ակտիվացման կոդով ԱՍԿ-ն ակտիվացնում է SoftPos հավելվածը:
16. SoftPos հավելվածի տրամադրմանը զուգահեռ ԱՍԿ-ի մոտ ակտիվանում է նաև Reversal և Refund

լրացուցիչ հնարավորությունները[1]:

17. Բանկը ԱՍԿ-ին կարող է տրամադրել նաև արտարժութային VPOS տերմինալ՝ միայն արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերով՝ ՀՀ օրենսդրության պահպանմամբ, վճարումներ ընդունելու նպատակով:
18. ԱՍԿ-ի կայքում VPOS տերմինալի միջոցով վճարումներ ընդունելու համար անհրաժեշտ տեխնիկական և ծրագրային ապահովումն իրականացվում է ԱՍԿ-ի կողմից:
19. POS տերմինալ(ներ)ի հանձնումը և հետ ընդունումը կատարվում է Բանկի կողմից ԱՍԿ-ի Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստին POS տերմինալ(ներ)ի մոդել(ներ)ը և սերիական համար(ներ)ը պարունակող գրություն ուղարկելու կամ Բանկի և ԱՍԿ-ի կողմից համապատասխան հանձման-ընդունման ակտ կնքելու միջոցով: Ընդ որում՝ էլեկտրոնային եղանակով հանձնումն իրականացնելու դեպքում, եթե ԱՍԿ-ն Բանկի կողմից ուղարկված գրությանը չի պատասխանում 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, ապա POS տերմինալ(ներ)ը համարվում են պատշաճ հանձնված:
20. ԱՍԿ-ն իրավասու չէ ձևափոխել և/կամ տրամադրել Բանկի կողմից տրամադրված Տերմինալները, համակարգչային ծրագրերը, նորմատիվ փաստաթղթերը և այլ նյութերը երրորդ անձանց: POS տերմինալը, SoftPos հավելվածը պետք է օգտագործվի միայն տվյալ ԱՍԿ-ում վաճառքներ իրականացնելու համար: Սույն կետով սահմանված պահանջը չկատարելու դեպքում ԱՍԿ-ն պարտավորվում է հատուցել Բանկին պատճառված իրական վնասները:
21. Բանկն տրամադրում է անհրաժեշտ քանակությամբ Տերմինալների բաղադրամասեր, հումքային և գովազդային նյութեր, որոնց հանձնումը ձևակերպվում է առանձին ակտով:
22. ԱՍԿ-ն պարտավոր է օգտագործել Բանկից ստացված սարքավորումները, հումքային և գովազդային նյութերը բացառապես Պայմանագրի շրջանակներում:
23. ԱՍԿ-Ն ապահովում է Բանկից ստացված Տերմինալների պատշաճ հսկողությունը:
24. ԱՍԿ-ն իրավունք չունի իրեն տրամադրված Տերմինալները կամ դրանց նկատմամբ իրավունքները հանձնել վարձակալության/ենթավարձակալության, կամ թույլատրել այլ անձանց օգտագործել այն:
25. POS տերմինալի կամ SoftPos հավելվածի խափանման, ինչպես նաև SoftPos հավելվածը պարունակող սարքի կորստի, SoftPos-ի, ArCalink-ի ծրագրային մուտքի տվյալները երրորդ անձանց հասանելի դառնալու դեպքերում անմիջապես տեղեկացնել Բանկին այդ մասին և անմիջապես կասեցնել քարտերի սպասարկման գործընթացը մինչև Բանկից լրացուցիչ հրահանգի ստացումը:
26. Պայմանագրի հիման վրա Բանկը իրականացնում է ԱՍԿ-ում կատարված քարտային գործարքների շուրջօրյա հավաստագրում:
27. Պրոցեսինգային կենտրոնի հաստատումը ստանալուց հետո Գործարքի գումարը Բանկի կողմից անկանխիկ եղանակով փոխանցվում է ԱՍԿ-ին՝ միջազգային Քարտերով գործառնությունների դեպքում

---

[1] *Reversal մինչև 72 ժամվա ընթացքում ԱՍԿ-ում իրականացված գործարքի գումարի չափով ամբողջական կամ մասնակի չեղարկման՝ հետ վերադարձի հնարավորություն :*
Refund ԱՍԿ-ում իրականացված գործարքի գումարի չափով ամբողջական կամ մասնակի չեղարկման՝ հետ վերադարձի հնարավորություն

մինչև 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ ArCa համակարգի շրջանակներում թողարկված քարտերով գործառնությունների համար մինչև 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

28. ԱՍԿ-ն իրավունք չունի քարտերով վճարվող գործարքների դեպքում քարտապաններից գանձել հավելավճարներ և/կամ կիրառել այլ պայմաններ, քան ԱՍԿ-ում սահմանված է կանխիկ գործարքների համար:

ԳԼՈՒԽ 5. ՋԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

29. ԱՍԿ-ում քարտով կատարված զեղծարար գործարք(ներ)ի բացահայտման կամ կասկածի դեպքում Բանկը էլեկտրոնային նամակով տեղեկացնելով ԱՍԿ-ին, իրավասու է ցանկացած պահի իր հայեցողությամբ՝ միակողմանի կասեցնել կամ դադարեցնել քարտային գործարքների իրականացման հնարավորությունը, ինչպես նաև ժամանակավոր կամ մշտապես կասեցնել ԱՍԿ-ի բոլոր հաշիվ(ներ)ի տնօրինման հնարավորությունը, մինչև գործարքների պարզաբանումը: Նման գործարքներից առաջացող բոլոր վնասների պատասխանատվությունը կրում է ԱՍԿ-ն, ընդ որում՝ սույն կետով սահմանված իրավասությունը գործում է նաև Պայմանագրի լուծման դեպքում:
30. Բանկն իրավասու է միակողմանիորեն դադարեցնել, կասեցնել և/կամ սահմանափակել ԱՍԿ հաշիվ(ներ)ից ելքագրումները քարտային գործառնությունների հավաստագրումը, եթե Բանկի կողմից ստացվել է տեղեկատվություն, որ.
    1) ԱՍԿ-ի միջոցով կատարվել են զեղծարար քարտային գործառնություններ, կամ առկա է նման հիմնավոր կասկած, կամ
    2) ԱՍԿ-ը մասնակցել է ոչ իրավաչափ կամ ապօրինի գործունեության, կամ առկա է նման հիմնավոր կասկած, կամ
    3) Պայմանագրի շրջանակներում ԱՍԿ-ի կողմից Բանկին տրամադրված տեղեկությունները հավաստի չեն եղել, կամ
    4) ԱՍԿ ծավալում է գործունեություն, որը կարող է վնասել Բանկի բարի համբավին:
31. Սույն գլխի 30-րդ կետում նշված դեպքերում Բանկը ծանուցում է ԱՍԿ-ին՝ նշելով հավաստագրման դադարեցման, կասեցման և/կամ հաշվից ելքագրումների սահմանափակման պատճառները ընդ որում, կասեցման և դադարեցման դեպքում միաժամանակ սահմանափակվում են նաև հաշիվ(ներ)ի ելքագրումները: Սույն կետում նշված ծանուցումն ուղարկվում է Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի հասցեով սահմանափակումը կիրառելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ ոչ աշխատանքային օրվա հետ համընկնելու դեպքում՝ դրան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետով սահմանված սահմանափակումները կիրառվում են մինչև համապատասխան հիմքի ամբողջական պարզաբանումը, ընդ որում՝ Բանկն իրավունք ունի փոփոխել իր կողմից կիրառված սահմանափակումը՝ փոփոխությունն իրականացնելուն հաջորդող 1 (մեկ)

աշխատանքային օրվա ընթացքում՝ այդ մասին Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով տեղեկացնելով ԱՍԿ-ին:

32. Այն դեպքում, երբ Բանկի հիմնավոր կասկածով ԱՍԿ-ում տեղադրված Տերմինալների միջոցով իրականացվում է որևէ տեսակի զեղծարարություն կամ Տերմինալ/ներ/ը ԱՍԿ-ի կողմից շահագործվում են շահագործման կանոնների խախտմամբ, Բանկն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն հրաժարվել Պայմանագրի դրույթներով ամրագրված կետերի կատարումից և հետ պահանջել իր կողմից տրամադրված Տերմինալները:
33. ԱՍԿ-ն պարտավոր է Քարտապանի կողմից գործարքի բողոքարկման դեպքում Բանկի կողմից հարցումը ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Բանկին տրամադրել գործարքի առաջնային փաստաթղթերը և գործարքի և քարտապանի վերաբերյալ առկա ողջ տեղեկատվությունը (օրինակ՝ քարտապանի անուն ազգանուն, վաճառված ապրանքի կամ մատուցված ծառայության վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն, ապրանքի տրամադրման/առաքման կամ ծառայության մատուցման ամսաթիվը, առկայության դեպքում քարտապանի հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և այլն):
34. ԱՍԿ-ի կողմից քարտի համարի ձեռքով մուտքագրման և/կամ գործարքի հետվճարի ֆունկցիան կիրառելու միջոցով լրացուցիչ հնարավորություն ընտրելու դեպքում, ԱՍԿ-ն կրում է լրացուցիչ հնարավորության միջոցով կատարված բոլոր գործարքների հետ կապված ողջ պատասխանատվությունը և ռիսկերը, այդ թվում, չսահմանափակվելով՝ գործարքների չկատարման, ոչ պատշաճ կատարման, անվավեր ճանաչման, հետվճարների՝ ՀՀ օրենսդրությանը հակասող կամ զեղծարար գործարքների կատարման հետ կապված բոլոր ռիսկերը և դրանցից բխող ցանկացած տեսակի, այդ թվում՝ ֆինանսական հետևանքները/պարտավորությունները՝ Բանկին զերծ պահելով այդ կապակցությամբ երրորդ անձանց կողմից ներկայացվող ցանկացած պահանջներից և/կամ գործարքների հետևանքով կրած իրական վնասի փոխհատուցումից:
35. Առանց քարտի ներկայացման գործարքների ժամանակ իրական քարտապանի լիարժեք նույնականացում չի կատարվում, մասնավորապես՝ գործարքի կատարման պահին քարտապանը իր քարտով ներկա չի գտնվում Առևտրային կետում: Առանց քարտի ներկայացման գործարքները բողոքարկվելու դեպքում ԱՍԿ-ն պարտավոր է Բանկին տրամադրել բոլոր այն փաստաթղթերը, որոնք փաստում են այդ գործարքին Քարտապանի տված համաձայնությունը, ինչպես նաև դրա հետ կապված այլ փաստաթղթերը: ԱՍԿ-ին տրամադրված տերմինալների միջոցով կատարված գործարքների համար պատասխանատվությունն ամբողջությամբ կրում է ԱՍԿ-ն և պարտավորվում է հատուցել Զեղծարար գործառնություն որակված գործարքների հետևանքով Բանկի կրած վնասները: Կողմերն ընդունում են, որ Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Զեղծարար գործառնություն որակված գործարքների հետևանքով ԱՍԿ-ի կրած վնասների համար: */ Կետը գործում է առանց քարտի ներկայացման գործարք կատարելու հնարավորությամբ POS-տերմինալ տեղադրելու պահանջի դեպքում:/*

36. ԱՍԿ-ն իրավունք չունի ընդունել քարտով վճարում, եթե տիրապետում է կամ կարող է տիրապետել տեղեկատվության այն մասին, որ գործարքը զեղծարար/ոչ իրավաչափ է կամ կատարվում է առանց Քարտապանի համաձայնության/թույլտվության:
37. ԱՍԿ-ի հետ սույն Կանոնների ներքո ծագած իրավահարաբերությունների ընթացքում Բանկը կատարում է քարտային գործարքների մոնիթորինգ՝ Վճարային համակարգերի պահանջների և Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն:
38. Համաձայնություն տալով սույն կանոններին ԱՍԿ-ն գիտակցում և ընդունում է, որ Բանկը հանդիսանում է VISA միջազգային վճարային համակարգի գործընկեր և հիմք ընդունելով VISA միջազգային վճարային համակարգի կողմից սահմանված պահանջները՝ Բանկը պարտավորվում է Պայմանագիրը Բանկի կամ Visa վճարային համակարգի նախաձեռնությամբ միակողմանիորեն լուծվելու դեպքում ԱՍԿ-ի վերաբերյալ տեղեկատվությունը, այդ թվում՝ անձնական տվյալներ, տեղադրել Visa Merchant Screening Service (VMSS) կայքում: VMSS կայքում ԱՍԿ-ի վերաբերյալ տեղադրված տեղեկատվությունը կարող է հասանելի դառնալ տվյալ կայքի միջոցով հարցում կատարելու իրավասություն ունեցող անձանց՝ համապատասխան հարցմամբ: ԱՍԿ-ի վերաբերյալ անձնական տվյալները պահպանվելու են անժամկետ՝ նույնիսկ իրավահարաբերությունների գործողության ավարտից հետո: Միևնույն ժամանակ ԱՍԿ-ն կարող է ցանկացած ժամանակ պահանջել ԱՍԿ-ի վերաբերյալ տվյալների ուղղում կամ ոչնչացում կամ մշակման դադարեցում, ինչպես նաև կատարել մշակման հետ կապված այլ գործողություններ՝ օրենսդրության պահանջների պահպանմամբ:

ԳԼՈՒԽ 6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

39. **Բանկն իրավունք ունի.**
1) ԱՍԿ-ից Քարտերով կատարված գործառնությունների դիմաց անակցեպտ գանձել տվյալ քարտատեսակի համար ակցեպտում նշված չափով միջնորդավճար:
2) Միակողմանի փոխել Ծառայության գործարքների միջնորդավճարի չափը՝ այդ մասին տեղեկացնելով ԱՍԿ-ին՝ Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի հասցեին առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ, նշելով նոր միջնորդավճարի չափը:
3) Պահանջել, որ ԱՍԿ-ն ներկայացնի վճարումը հավաստող տեղեկատվություն՝ Վճարային համակարգից ստացված հաղորդագրության, գործարքի բողոքարկման, զեղծարարության կասկածի, Բանկի կողմից ներկայացված պահանջի դեպքում:
4) Ցանկացած ժամանակ անցկացնել միակողմանի և/կամ ԱՍԿ-ի հետ համատեղ ստուգում զեղծարար քարտային գործառնությունների բացահայտման նպատակով:
5) Կատարել փոփոխություններ Քարտերի սպասարկման տեխնիկայում՝ այդ մասին ոչ ուշ, քան 5 (հինգ) օրացուցային օր առաջ, տեղեկացնելով ԱՍԿ-ին:
6) Անվավեր համարել այն անդորրագրերը, որոնց վրա կբացակայեն Քարտատերերի ստորագրությունները կամ չեն ներկայացվի Բանկ վերջինիս առաջին իսկ պահանջով: Սույն կետով

սահմանված պահանջը գործում է, եթե գործարքը կատարվել է առանց ՊԻՆ Ծածկագրի կիրառման և գործարքի վավերացման համար պահանջվել է հաճախորդի ստորագրությունը, նշված դեպքում անդորրագրի վրա արտացոլվում է ստորագրության համար նախատեսված դաշտ):

7) Հետգանձման պահանջի առկայության դեպքում անակցեպտ կարգով ԱՍԿ-ի Բանկում գործող բոլոր հաշիվներից գանձել գործարքի ամբողջ գումարը:
8) Արգելել Քարտերի սպասարկումը ԱՍԿ-ում՝ ԱՍԿ-ի որևէ պարտավորության չկատարման, ինչպես նաև Բանկի և/կամ միջազգային Վճարային համակարգերից որևէ մեկից Քարտերի սպասարկումը դադարեցնելու պահանջ ստանալու դեպքում:
9) Ձեռնարկել միջոցներ ԱՍԿ-ի ինտերնետ կայքի, ինչպես նաև նրա հետ տեղեկատվական կապի մեջ գտնվող այլ Ինտերնետ-պորտալների կանոնավոր ստուգման համար՝ Վճարային համակարգերի պահանջներին համապատասխանությունը ստուգելու համար:
10) Անակցեպտ կարգով ԱՍԿ-ի՝ Բանկում գործող բոլոր հաշիվներից գանձել տերմինալների սպասարկում լրացուցիչ հնարավորությունների տրամադրման արդյունքում Քարտապանի կամ Բանկի կրած վնասները և վերջինիս կողմից Քարտապանին վճարված գումարները, ինչպես նաև սահմանափակել ԱՍԿ-ի կողմից հաշիվներում առկա միջոցների տնօրինումը, մինչև հետևանքների վերաբերյալ համապատասխան պարզաբանումների ստացումը: Ընդ որում, նշված սահմանափակումները կարող են կիրառվել Վճարային համակարգերում գործարքների ճշգրտման, չեղարկման, հաստատման, պարզաբանման համար սահմանված ժամկետով, ինչպես նաև մինչև ՀՀ իրավապահ մարմինների կողմից իրենց վերապահված գործողությունների կատարման ավարտը, եթե այդպիսիք կատարվում են:
11) Անակցեպտ կարգով ԱՍԿ-ի՝ Բանկում գործող բոլոր հաշիվներից գանձել սույն կանոններով և Պայմանագրով սահմանված միջնորդավճարները և սպասարկման վճարները, այդ թվում՝ շտապ տեղադրման միանվագ միջնորդավճարը, POS տերմինալի կորստի կամ վնասման դեպքում տերմինալի արժեքը
12) ԱՍԿ-ի հաշիվներից սույն Կանոնների 6-րդ գլխում նախատեսված միջնորդավճարների, ինչպես նաև Ծառայություններ մատուցելու հետևանքով առաջացող այլ վճարների գանձման համար ԱՍԿ-ի հաշիվներին գումարների բացակայության դեպքում ԱՍԿ-ի անունով ձևավորվում է դեբիտորական պարտավորություն: Հաճախորդի դեբիտորական պարտավորությունների դասակարգումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
13) ԱՍԿ-ից հատուցում պահանջել անվավեր գործարքների գումարները Քարտապաններին վերադարձնելու համար, ինչպես նաև պահել ԱՍԿ-ին նախկինում վճարված այն գործառնությունների գումարները, որոնք անվավեր են ճանաչվել Բանկի կողմից:
14) Միակողմանիորեն դադարեցնել Պայմանագրի գործողությունը՝ այդ մասին էլեկտրոնային եղանակով ծանուցելով ԱՍԿ-ին, եթե որևէ տեխնիկական խնդրի պատճառով անհնարին է Տերմինալի տեղադրումը և/կամ ակտիվացումը սահմանված ժամկետում կամ Բանկից անկախ հանգամանքների պատճառով

Տերմինալի տեղադրման գործընթացում առաջանում են տեխնիկական ծրագրային խնդիրներ, որոնք բերում են Տերմինալի գործարկման անհնարինության: Ընդ որում՝ սույն կետով սահմանված դեպքում Պայմանագիրը համարվում է լուծված ծանուցումն ուղարկելու պահից:

15) Չկատարել փոխանցում ԱՍԿ-ին, եթե առկա են սույն կանոնների 44-րդ կետի համաձայն վճարման տեղեկատվությունը անվավեր ճանաչելու հիմքերը:
16) Ստուգել ԱՍԿ-ի կողմից ներկայացված տվյալները, ինչպես նաև ուսումնասիրել վիճելի գործառնությունները և դրանց կատարման ընթացքում Վճարային քարտերի ոչ իրավաչափ օգտագործման փաստերը:
17) Միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ այդ մասին 15 /տասնհինգ/ աշխատանքային օր առաջ տեղեկացնելով ԱՍԿ-ին (որի պարագայում կարող է ապաակտիվացվել նաև ՀԴՄ սարքը) ընդ որում՝ սույն կետով նախատեսված դեպքում ԱՍԿ-ն պարտավոր է Բանկի՝ Տերմինալները վերադարձնելու և Պայմանագիրը դադարեցնելու մասին ծանուցումը ստանալուց հետո 10 /տասը/ օրվա ընթացքում վերադարձնել Բանկի կողմից տրամադրված Տերմինալները, իսկ չվերադարձնելու դեպքում Բանկն իրավունք ունի ԱՍԿ-ի Բանկում գործող հաշիվներից անակցեպտ գանձել չվերադարձված Տերմինալների արժեքին համապատասխան չափով գումար բացառությամբ սույն կանոնների 5-րդ գլխում նկարագրված դեպքերի:
18) Պայմանագրի կնքումից հետո 12 ամիսների ընթացքում Պայմանագրի դադարեցման դեպքում Բանկը կարող է կիրառել միանվագ տուգանք:
19) Սույն Կանոնների ներքո ծագած իրավահարաբերության ամբողջ ընթացքում, անհրաժեշտության դեպքում, ԱՍԿ-ից պահանջել հավելյալ տեղեկատվություն՝ ի լրումն Բանկ ներկայացված տեղեկատվության և փաստաթղթերի:

40. **ԱՍԿ-ն իրավունք ունի**

1) Սույն կանոնների 27-րդ կետում նշված ժամանակահատվածում ստանալ կատարված գործարքների դիմաց գումարային փոխհատուցումը:
2) Պահանջել, որ Բանկը ԱՍԿ-ի ինտերնետ-կայքի միջոցով քարտերի օգտագործմամբ վճարումներով պայմանավորված փոխանցումները կատարի սույն կանոններով նշված ժամկետում, բացառությամբ սույն կանոնների 39-րդ կետի 13) և 15)-րդ ենթակետերում նշված դեպքերի:
3) ԱՍԿ-ում կատարված անվավեր գործարքի պատճառով ԱՍԿ-ից դրամական միջոցների պահման հետ անհամաձայնության դեպքում, պահումից հետո 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում, գրավոր պահանջել հավաստում, որ գործարքը անվավեր է ճանաչվել սույն կանոնների 44-րդ կետի հիմքով, բողոքարկված է (հաստատված չէ) Քարտապանի կամ թողարկող բանկի կողմից:

41. Բանկը պարտավոր է.

1) Տրամադրել “ArCa SecurePay”, “Verified by Visa” և “MasterCard Secure Code” տարբերանշանները ԱՍԿ-ին՝ web կայքում տեղադրելու համար և գործարքների կատարման ժամանակ կիրառել անվտանգության «3-D Secure» համակարգ: /Դրույթը կիրառելի է, եթե ԱՍԿ-ին չի տրամադրվել 3D Secure ապաակտիվացման հնարավորություն:/
2) Կատարել Տերմինալների տեխնիկական/վճարային սպասարկում:

3) ԱՍԿ-ի աշխատակիցների համար իրականացնել ուսուցում՝ Քարտերի պարտադիր վավերապայմանները ստուգելու, Տերմինալներով գործառնություններ կատարելու և այն սպասարկելու, ինչպես նաև զեղծարարության հնարավոր դեպքերի և դրանց հնարավոր կանխարգելման մեխանիզմների վերաբերյալ:
4) Անհրաժեշտության դեպքում ԱՍԿ-ին մատուցել խորհրդատվական օժանդակություն Քարտերով սպասարկելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների և Քարտապաններին պատշաճ սպասարկում իրականացնելու վերաբերյալ:
5) Ապահովել Քարտերով կատարված գործառնությունների գումարների փոխհատուցումը ԱՍԿ-ին սույն կանոններով նշված ժամանակահատվածում:
6) Տեղեկացնել ԱՍԿ-ին սույն Կանոնների 39-րդ կետի 15)-րդ. ենթակետով սահմանված դեպքերում վճարների պահման մասին՝ պահումից հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ նշելով գործառնությունն անվավեր ճանաչելու պատճառները: (Կիրառելի է VPOS դեպքում:)

42. ԱՍԿ-ն պարտավոր է՝

1) Սպասարկել Քարտերի Քարտապաններին միայն այն բանից հետո, երբ հավաստագրման կենտրոնից ստացվել է գործարքի բարեհաջող կատարման հաստատում իր համապատասխան հավաստագրման կոդով, անկախ գործարքի գումարի չափից:
2) Քարտերով գործառնություններ կատարելու դեպքում վճարել Բանկին Պայմանագրով նախատեսված միջնորդավճարները:
3) Ինտերնետային կայքում ապահովել.
   ա. Վճարահաշվարկային համակարգերի լոգոների առկայությունը,
   բ. Տրամադրվող ապրանքների/ծառայությունների ամբողջական նկարագրությունը,
   գ. Ապրանքների և գումարի վերադարձի քաղաքականությունը,
   դ. Հաճախորդների սպասարկման ստորաբաժանման կոնտակտային տվյալների, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի հասցեի կամ հեռախոսահամարի առկայությունը,
   ե. ԱՍԿ-ի գտնվելու հասցեի առկայությունը քարտապանի գնումների հաստատման կամ վճարման էջում, (առկայության դեպքում),
   զ. Գործարքի արժույթի տեսակը,
   է. Առաքման քաղաքականությունը, (առկայության դեպքում),

ը. Բազմակի (մեկ գործարքի ներքո տարբեր հասցեներով) առաքումների քաղաքականություն (առկայության դեպքում),
թ. Սպառողների տվյալների գաղտնիության քաղաքականությունը,
ժ. Քարտային տվյալների անվտանգության պահպանման եղանակներ,
ի. դեղատոմսերով վաճառվող դեղերի վաճառքի առկայություն (առկայության դեպքում),
լ. Բրենդային ապրանքի կրկնօրինակի վաճառքի դեպքում անհրաժեշտ է հաճախորդի համար տեսանելի վայրում և տեսանելի եղանակով նշել ապրանքների կրկնօրինակի փաստը,
խ. ոչ բրենդային ապրանքների վաճառքի դեպքում այդ մասին կայքի գլխավոր էջի տեսանելի վայրում կատարել համապատասխան նշում,
ծ.Մատուցվող ծառայություններին բաժանորդագրվելու դեպքում հետագա պարբերական գանձումների մանրամասն նկարագրությունը հաճախորդի համար տեսանելի վայրում,
կ. Քարտապանի տվյալների վերահասցեավորման փաստը այլ կայքերին:

4) Պահպանել քարտերով կատարված գործարքների անդորրագրերի պատճենները, իսկ SoftPos, VPOS և/կամ ArCalink -ի դեպքում՝ էլեկտրոնային անդորրագրերը՝ 1 /մեկ/ տարվա ընթացքում՝ սկսած գործարքի կատարման օրվանից՝ պահպանելով դրանց ամբողջականությունը, և Բանկի առաջին իսկ պահանջով տրամադրել դրանք Բանկին:
5) Արտարժութային վճարումներ ընդունել միայն Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս իրականացվող գնումների դեպքում: *(կիրառելի է արտարժութային vPOS ծառայության դեպքում:)*
6) Բանկի պահանջով տրամադրել Վճարումը հավաստող տեղեկատվություն՝ հարցումը ստանալուց 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Նշված հարցումը կարող է ուղղվել ԱՍԿ-ին առձեռն կամ էլեկտրոնային փոստով:
7) Պայմանագրում նախատեսված գործառնությունները իրականացնել միայն ՀՀ դրամով, ***բացառությամբ արտարժութային vPOS-ի,*** երբ Բանկը ԱՍԿ-ին կարող է տրամադրել արտարժութային vPOS տերմինալ՝ միայն արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերով գործարքների իրականացման համար՝ ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ, վճարումներ ընդունելու նպատակով:
8) Ապօրինաբար գործածվող Քարտի առգրավման դեպքում լրացնել սույն Կանոններին կից «Քարտերի առգրավման ակտը» (այսուհետ՝ Հավելված 1) և երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնել այն Բանկին:
9) Քարտերով գործառնություններ կատարելու դեպքում օգտագործել սարքավորումներ և նյութեր, որոնք տրամադրվել են Բանկի կողմից կամ ստացել են Բանկի հավանությունը:
10) Վճարային քարտի միջոցով կատարված գործարքի բողոքարկման դեպքում ներկայացնել իրեն հասանելի և տվյալ գործարքի հետ առնչվող փաստաթղթերը, իսկ Բանկի պահանջի առկայության դեպքում նաև հատուցել Բանկի կատարած ծախսերը:

11) Հատուցել Բանկին պատճառված վնասները, որոնք անփութությամբ կամ դիտավորությամբ ԱՍԿ-ի կողմից հասցվել են POS-տերմինալին:
12) Քարտերով գործառնությունները կատարել բացառապես Սարքավորումների գործադրմամբ և չիրականացնել Քարտերի տվյալների ընթերցումը այլ սարքերի միջոցով:
Ընդ որում՝ սույն կետով նախատեսված պարտավորությունը խախտելու համար ԱՍԿ-ն պարտավորվում է հատուցել խախտման արդյունքում Բանկին պատճառված բոլոր վնասները:
13) Գրավոր ծանուցել Բանկին Պայմանագրում նշված տեղեկությունների, հասցեի և/կամ վավերապայմանների, ԱՍԿ-ի վերաբերյալ տեղեկատվության փոփոխության մասին՝ այդ փոփոխությունների փաստացի կատարումից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:
14) Ստուգել Բանկի կողմից կատարված Փոխանցումները և պահումները:
15) Ոչ ուշ, քան Բանկի պահանջը ստանալուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում հատուցել Բանկին այն վնասները, որոնք առաջացել են քարտային գործառնությունների պատճառով հարուցված միջազգային վճարային համակարգերի և/կամ քարտեր թողարկող բանկերի բողոքարկումների արդյունքում, ընդ որում, նման պահանջի դեպքում Բանկը կարող է գանձել գումարը կամ սահմանափակել հաշիվ/ներ/ի օգտագործումը՝ պահանջված գումարի չափով: Սույն կետում նշված վնասների հատուցման պահանջը կարող է ուղարկվել ԱՍԿ-ին ոչ ուշ, քան գործարքի կատարումից 540 (հինգ հարյուր քառասուն) օրացուցային օրվա ընթացքում, ընդ որում, այդ կանոնը և սույն կետով սահմանված դրույթները շարունակում են գործել, եթե անգամ դադարեցվել է Պայմանագրի գործողությունը (լուծվել է Պայմանագիրը):
16) Վճարային քարտերի սպասարկման կանոնների փոփոխության կամ քարտային գործառնությունների անվտանգության լրացուցիչ միջոցների, ինչպես նաև այլ հրահանգների և լրացուցիչ պահանջների վերաբերյալ Բանկից ծանուցում ստանալու դեպքում ապահովել նշված հրահանգների և պահանջների կատարումը իր աշխատակիցների կողմից:
17) ԱՍԿ ինտերնետ կայքում (դրա առկայության դեպքում) ապահովել Վճարման պայմանների հստակ նկարագիրը:
18) Տեղեկացնել Քարտապանին (նախքան վճարային քարտի օգտագործմամբ գործառնություն կատարելը կամ դրա ընթացքում) ՀՀ օրենսդրությամբ սահմանված ցանկացած սահմանափակումների մասին:
19) Բանկի հարցմամբ ներկայացնել տեղեկատվություն այն գործառնությունների մասին, որոնք քարտային զեղծարարությունների կասկած են հարուցում:
20) Չիրականացնել սույն կանոնին կից *«Արգելված ծառայությունների և առևտրային կետերի տեսակներ» Հավելված 2-ով (այսուհետ՝ Հավելված 2)* արգելված գործունեության տեսակները:
21) Միակողմանի կամ Բանկի հետ համատեղ իրականացնել ամենօրյա ստուգում կասկածելի և Պայմանագրով արգելված քարտային գործառնությունների բացահայտման համար, և այդպիսի գործարքների բացահայտման դեպքում անհապաղ fraud.monitoring@idbank.am էլ. հասցեով

տեղեկացնել Բանկին:

22) Հատուցել Բանկին Վճարային համակարգերի կողմից Բանկի նկատմամբ ԱՍԿ ինտերնետ-կայքում հայտնաբերված խախտումների համար կիրառած տույժերը, տուգանքները ոչ ուշ, քան Բանկի ծանուցումը ստանալուց 10 (տասը) օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 7.ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ

43. Քարտապանի կողմից Վճարային քարտի միջոցով իրականացված վճարումների չեղարկման անհրաժեշտության դեպքում ԱՍԿ-ն Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի հասցեից դիմում է Բանկի ATM.Merchant@idbank.am էլեկտրոնային փոստին վճարման գործառնությունը չեղյալ համարելու խնդրանքով: Սույն կետով սահմանված դիմումը Բանկի կողմից ստանալուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում չեղարկված գործարքի գումարը փոխանցվում է գործարքն իրականացրած քարտապանին, եթե գործարքի չեղարկումը իրականացվել է գործարքի կատարման ժամից ոչ ուշ, քան 72 ժամը, հակառակ դեպքում՝ մինչև 10 աշխատանքային օրվա ընթացքում կախված գործարքը կատարած քարտը թողարկող Բանկի ներքին իրավական ակտերից, ինչի մասին ԱՍԿ-ին ուղարկվում է պատասխան նամակ: Սույն կետով սահմանված դիմումը ԱՍԿ-ի կողմից կարող է ներկայացվել նաև Բանկ-հաճախորդ համակարգով (IDBusiness համակարգ):
44. ԱՍԿ-ի ինտերնետ-կայքի միջոցով քարտերի օգտագործմամբ գործարքները համարվում են անվավեր, եթե՝
    1) Վճարային քարտի օգտագործմամբ կատարված գործարքը իրականացվել է Պայմանագրի կամ սույն կանոնների պահանջների խախտմամբ.
    2) Վճարային քարտի օգտագործմամբ կատարված գործարքը անհիրավաչափ (անվավեր) է ճանաչվել Վճարային համակարգի կողմից.
45. ԱՍԿ-ն ընդունում է, որ ԱՍԿ-ն ինտերնետ կայքի միջոցով քարտերի օգտագործմամբ գործարքի անվավերության բավարար ապացույց է հանդիսանում Վճարային համակարգից էլեկտրոնային եղանակով Բանկին Քարտապանի կամ Թողարկող բանկի ուղարկած հայտարարությունը:
46. ԱՍԿ-ը կարող է պահանջել, իսկ Բանկը պարտավորվում է ԱՍԿ-ի պահանջով ներկայացնել այն փաստաթղթերի պատճենները, որոնց հիման վրա գործարքներն անվավեր է ճանաչել:
47. Սույն կանոնների 44-րդ կետի համաձայն անվավեր ճանաչված գործարքներով Քարտապաններին դրամական միջոցների վերադարձը իրականացվում է ԱՍԿ-ի հաշվին կատարված քարտային վճարումներից՝ ԱՍԿ-ին փոխանցման ենթակա դրամական միջոցներից համապատասխան գումարը գանձելու միջոցով:
48. Սույն կանոնների 47-րդ կետում նշված դրամական միջոցների պահումը իրականացվում է ԱՍԿ-ին հերթական վճարումը կատարելու ժամանակ կամ Բանկում ԱՍԿ-ի անվամբ սպասարկվող հաշվից անակցեպտ գանձելու միջոցով: Եթե ԱՍԿ-ի միջոցները չեն բավարարում գոյացած պարտքը մարելու

համար, Բանկն իրավունք ունի պահանջել ԱՍԿ-ից վճարելու անհրաժեշտ գումարը:

49. ԱՍԿ-ի ինտերնետ-կայքում քարտային գործարքների (ներառյալ նույն օրը կատարված և կասեցված գործարքների հաշվարկը, որոնց Վճարումը հավաստող տեղեկատվությունը գործարքի կատարման օրը չի ստացվել կամ ստացվել է սխալներով, կարող է իրականացվել Բանկի կողմից անհրաժեշտ ուսումնասիրություն անցկացնելուց հետո, սակայն ոչ ուշ, քան վիճելի գործարքի մասին ԱՍԿ-ի ծանուցումը ստանալուց 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 8. ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

50. Կողմերը պարտավորվում են պահպանել Պայմանագրի կատարման ընթացքում միմյանցից ստացված կամ նրանց հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը, չհրապարակել և ընդհանուր կամ մասնավոր կարգով չբացահայտել գաղտնի տեղեկատվությունը որևէ երրորդ կողմի առանց մյուս կողմի գրավոր համաձայնության՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
51. Կողմերը պարտավորվում են գրավոր հաղորդել միմյանց, թե որ տեղեկություններն են համարվում գաղտնի: Առանց այդ մասին հատուկ նշելու Վճարային քարտի համարը կամ այլ վավերապայմանները, ինչպես նաև դրանց օգտագործմամբ իրականացված գործարքներին վերաբերող տեղեկությունները համարվում են գաղտնի:
52. Կողմերը պարտավորվում են չձևափոխել և չտրամադրել երրորդ անձանց Բանկի կողմից տրամադրված համակարգչային ծրագրերը, նորմատիվ փաստաթղթերը և այլ նյութերը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
53. Սույն կանոնների 50-րդ կետի պահանջը չի տարածվում օրենքով նախատեսված մարմինների կամ անձանց հարցմամբ գաղտնի տեղեկությունների բացահայտման դեպքերի վրա:
54. Սույն կանոնների սույն գլխի պահանջների խախտմամբ պատճառված վնասը ենթակա է հատուցման լրիվ ծավալով, մեղավոր կողմի հաշվին, այն պայմանով, որ տուժող կողմը փաստաթղթերով կհաստատի կրած վնասի չափը:

ԳԼՈՒԽ 9. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

55. Կողմերը պատասխանատվություն են կրում Պայմանագրով և սույն կանոններով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:
56. Սույն կանոնների 44-րդ կետի 1)-րդ ենթակետով նախատեսված պարտավորությունները խախտելու դեպքում Բանկն իրավունք ունի ԱՍԿ-ից պահանջել վճարել տուգանք յուրաքանչյուր խախտման համար՝ Սակագներով սահմանված չափով: Ընդ որում՝ Բանկն իրավասու է տուգանքի ամբողջ գումարը անակցեպտ կարգով գանձել ԱՍԿ-ի՝ Բանկում գործող բոլոր հաշիվներից:

57. Բանկը պատասխանատվություն չի կրում վճարման կետանցի համար, եթե այն կապված է Պայմանագրում նշված կամ այլ կերպ Բանկին տրամադրված վավերապայմանների փոփոխության մասին Բանկին ժամանակին չտեղեկացնելու, կամ անհաղթահարելի ուժի կամ ոչ Բանկի մեղքով տեղի ունեցած տեխնիկական միջոցների կամ կապուղիների խափանման պատճառով:
58. Տուժանքի (տուգանք և տույժ) վճարումը, վնասների հատուցումը ԱՍԿ-ին չի ազատում իր ստանձնած պարտավորությունները կատարելուց, ինչպես նաև չի կարող որևէ կերպ սահմանափակել Բանկի իրավունքները:
59. Սույն կետի ենթակետերում նշված դեպքերում ԱՍԿ-ն կրում է Ծառայության միջոցով կատարված բոլոր գործարքների հետ կապված ողջ պատասխանատվությունը և ռիսկերը, այդ թվում՝ չսահմանափակվելով՝ գործարքների չկատարման, ոչ պատշաճ կատարման, անվավեր ճանաչման, հետվճարների, ՀՀ օրենսդրությանը հակասող կամ զեղծարար գործարքների կատարման հետ կապված բոլոր ռիսկերը և դրանցից բխող ցանկացած տեսակի, այդ թվում՝ ֆինանսական հետևանքները/պարտավորությունները՝ Բանկին զերծ պահելով այդ կապակցությամբ երրորդ անձանց կողմից ներկայացվող ցանկացած պահանջներից և/կամ գործարքների հետևանքով կրած իրական վնասի փոխհատուցումից.
    1) ԱՍԿ-ի նախընտրությամբ Ծառայության համար ակտիվացվել է գործարքի հետվճարի ֆունկցիան (Refund),
    2) ԱՍԿ-ի նախընտրությամբ Ծառայության համար ակտիվացվել է քարտի համարի կցման ֆունկցիան (Binding), ներառյալ եթե տվյալ ինտերնետային կայքում քարտի համարի կցումից հետո տվյալ քարտով հետագա գործարքների համար 3D secure հավաստագրում չի պահանջվում,
    3) ԱՍԿ-ի կողմից սպասարկվում են այնպիսի վճարային համակարգերի քարտեր, որոնք չեն ապահովում 3D secure կամ որոնց համար Ծառայության Պրոցեսինգային կենտրոնը չի ապահովում 3D secure,
    4) ԱՍԿ-ի նախընտրությամբ Ծառայության համար ակտիվացվել է Սարքավորումների վրա քարտի տվյալները ձեռքով մուտքագրելու հնարավորություն (Key Enter),
    5) ԱՍԿ-ի նախընտրությամբ Ծառայության համար ակտիվացվել է մինչև 72 ժամվա ընթացքում իրականացված գործարքի գումարի չափով ամբողջական կամ մասնակի չեղարկման՝ ետ վերադարձի հնարավորություն (Reversal),
    6) ԱՍԿ-ի նախընտրությամբ Ծառայության համար ակտիվացվել է Գործարքի գումարի կամ դրանից ավել գումարի չափով Քարտապանի Վճարային քարտի գումարի սառեցման և մասնակի կամ ամբողջական գանձման հնարավորություն (PreAuthorization)

ԳԼՈՒԽ 10. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

60. Կողմերն ազատվում են պատասխանատվությունից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, եթե այն պայմանավորված է անհաղթահարելի ուժի հանգամանքներով, որոնք առաջացել են Պայմանագիրը կնքելուց հետո՝ ներառյալ հրդեհը, ջրհեղեղը, երկրաշարժը, ռազմական գործողությունները, գործադուլները, պետական մարմինների ցանկացած անկանխատեսելի գործողությունները, կողմերի կամքից անկախ այլ հանգամանքները, եթե նման հանգամանքներն անմիջականորեն ազդել են պայմանագրային պարտավորությունների կատարման վրա: Նշված դեպքերում պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետները համապատասխանաբար հետաձգվում են այդ հանգամանքների գործողության ժամանակով:

ԳԼՈՒԽ 11. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

61. Պայմանագրի կապակցությամբ վեճերի առաջացման դեպքում Կողմերը այդ վեճերը կարող են լուծել բանակցությունների միջոցով:
62. Վճարման ենթակա դրամական միջոցների գումարներին ու փոխանցման ժամկետներին վերաբերող բողոքները ընդունվում են քննարկման Կողմերի գրավոր դիմումների հիման վրա, վիճահարույց գործարքներն իրականացնելուց 540 (հինգ հարյուր քառասուն) օրացուցային օրվա ընթացքում:
63. Կողմերի դիմում-բողոքներին կից ներկայացվում են դիմումը քննարկելու համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները, որոնք վավերացված են կողմերի իրավասու անձանց կողմից:
64. Պայմանագրով կամ սույն կանոններով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
65. Կողմերի իրավահարաբերությունների ընթացքում ծագող վեճերն ընդդատյա են ՀՀ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

ԳԼՈՒԽ 12. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

65. Պայմանագիրը համարվում է կնքված և ուժի մեջ է ԱՍԿ-ի կողմից Ակցեպտը ստանալու պահից և գործում է անորոշ ժամկետով:
66. Պայմանագրի գործողությունը կարող է դադարեցվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ մյուս կողմին նախօրոք 15 (տասնհինգ) աշխատանքային օր առաջ գրավոր տեղյակ պահելուց հետո, բացառությամբ սույն կանոնների 30-րդ և 67-րդ կետերում նշված դեպքերի: Մինչ Պայմանագրի գործողության դադարեցումը կողմերը կատարում են միմյանց հանդեպ պարտավորությունները, իսկ ԱՍԿ-ն վերադարձնում է իրեն հանձնված Տերմինալները, բացառությամբ սույն կանոնների 30-րդ կետով նախատեսված դեպքի:
67. Սույն կանոնների 66-րդ կետի դրույթներով Պայմանագրի գործողության դադարեցումից հետո 540 (հինգ հարյուր քառասուն) օրացույցային օրվա ընթացքում ԱՍԿ-ում կատարված գործառնությունների հետ

կապված վճարային համակարգերից Բանկին հետգանձման ներկայացման դեպքում՝ Պայմանագրի գործողության դադարեցումը համարվում է անվավեր՝ մինչ Պայմանագրով ԱՍԿ-ի համար սահմանված առաջացած պարտավորությունների կատարումը:

68. Կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է անմիջապես տեղեկացնել մյուս կողմին կոմերցիոն և իրավաբանական տվյալների փոփոխությունների մասին:
69. ԱՍԿ-ի կողմից Տերմինալի տեղադրման թույլտվությամբ հավաստվում է ակցեպտում նշված բոլոր պայմաններին համաձայնության տրամադրումը, այդ թվում՝ օֆերտայով չնախատեսված կամ օֆերտայի պայմանների հետ հակասություն ունեցող պայմանների ընդունումը:
70. Սույն կանոնները հանդիսանում են Պայմանագրի բաղկացուցիչ և անբաժանելի մասը:
71. Սույն Կանոնները հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքում և կարող են պարբերաբար Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել, փոփոխված Կանոնները ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, եթե Բանկի կողմից փոփոխություններն ուժի մեջ մտնելու առավել ուշ ժամկետներ չեն սահմանվում:
72. Պայմանագրի գործողության ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվային ակտերի փոփոխությունները, որոնք կտարածվեն Պայմանագրի պայմանների վրա, պարտադիր են Կողմերի համար:
73. Սույն կանոնների և Պայմանագրի միջև հակասությունների դեպքում նախապատվությունը տրվում է Պայմանագրին:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՔԱՐՏԵՐԻ ԱՌԳՐԱՎՈՒՄ

Քարտերի առգրավումը իրականացվում է քարտեր սպասարկող անձի կողմից հետևյալ դեպքերում՝

- էլեկտրոնային հավաստագրման ժամանակ Պրոցեսինգային կենտրոնից քարտի առգրավման վերաբերյալ կոդերի (ցանկը նշված է Բանկի պաշտոնական կայքէջում հրապարակված ուղեցույցում) ստացման,
- Բանկի պաշտոնական կայքէջում հրապարակված ուղեցույցով սահմանված դեպքերում:

Առգրավված քարտերը ներկայացվում են Բանկ:

ԱԿՏ
ՔԱՐՏԵՐԻ ԱՌԳՐԱՎՄԱՆ

1. Սպասարկող կազմակերպության անվանումը

_____

2. Պատասխանատու անձի անուն, ազգանունը

_____

3. Քարտի տեսակը

_____

4. Առգրավված քարտի համարը

_____

5. Քարտի գործողության ժամկետը

_____

Պատասխանատու անձի ստորագրությունը _____

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԱՐԳԵԼՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԵՏԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ

Visa/Master համաշխարհային բրենդի պաշտպանության ծրագրի նույնականացում (ՀԲՊԾ)

ՀԲՊԾ-ի նույնականացումը վերաբերում է Visa/Master, բրենդի բոլոր օգտագործողներին: Այն մատնանշում է իրավիճակներ, երբ Visa//Master բրենդը առնչվում է որևէ անօրինական գործունեության հետ կամ այնպիսի գործունեության հետ, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ բրենդի վրա: Սա ներառում է, սակայն չի սահմանափակվում Visa/Master միջազգային բրենդի գործարկման կանոնակարգերով: Այդպիսի գործարքների օրինակները ներառում են՝

1. Դեղատոմսով նշանակվող դեղերի անօրինական վաճառք.

Դեղատոմսով նշանակվող դեղերի վաճառք իրականացնող Առևտրային կետերի հետ գործարք կնքելիս Ընկերությունը պարտավոր է՝

1) Համապատասխան ձևով ստուգել Առևտրային կետի պրոդուկտները, ծառայությունները և մարքեթինգային նյութերը, ինչպես նշված է «*Visa/*Master *համաշխարհային բրենդի ձեռքբերողի ռիսկի չափանիշներում*», որպեսզի կանխվի գործող օրենքներով արգելված նյութերի վաճառքը:

2) Անկախ և որակավորված իրավաբանից ստանալ գրավոր եզրակացություն, որտեղ նշված կլինի, որ Առևտրային կետի գործունեությունը ամբողջովին համապատասխանում է բոլոր գործող օրենքներին և կանոնակարգերին: Նման եզրակացությունը պետք է ձեռք բերվի առնվազն տարին մեկ անգամ: Visa/Master-ի կողմից պահանջ ներկայացնելու դեպքում Ընկերությունն այլ համապատասխանության փաստաթղթերի հետ միասին պետք է ներկայացնի վերոնշյալ եզրակացության պատճենը:

2. Կեղծ կամ անօրինական ապրանքանիշերով արտադրանքի կամ ծառայության վաճառք.

Ընկերությունը պետք է ուշադիր հետևի Առևտրային կետերի և դրանց գործակալների բիզնես գործելակերպին և նախազգուշական միջոցառումներ ձեռնարկի, որպեսզի կեղծ կամ անօրինական հեղինակային իրավունքով արտադրանքի կամ ծառայության վաճառք չիրականացվի: Նման գործարքները ներառում են, սակայն չեն սահմանափակվում ներքոգրյալներով՝

1) Ֆիլմերի, երաժշտության, համակարգչային խաղերի, տեսախաղերի կամ համակարգչային ծրագրերի անօրինական ներբեռնում,
2) Կեղծված դեղագործական ապրանքներ,
3) Կեղծված ծխախոտային ապրանքներ (օրինակ՝ ծխախոտներ, սիգարներ),
4) Կեղծված դիզայներական ապրանքներ:

3. Հավանական խաբուսիկ մարքեթինգային փորձ.

Որոշ կազմակերպություններ ունեն անհասկանալի գանձման մեխանիզմ, տեղեկատվության բացահայտման քաղաքականություն և ագրեսիվ մարքեթինգային գործելակերպ, ինչը խիստ

ապակողմնորոշիչ է և կարող է Քարտապաններին ուղղված խաբկանքի և զեղծարարության հավանական ազդեցություն ունենալ: Visa/Master համակարգը վերոնշյալ գործողություններից Քարտապաններին պաշտպանելու համար պահանջում է ձեռնարկել միջոցառումներ, որոնք զերծ կպահեն Visa/Master Inc. ընկերության կամ փոխկապակցված ընկերությունների բարի համբավի վրա բացասական հետևանքներից, և կպաշտպանեն Քարտապաններին նման անազնիվ գործելակերպից: Ուստի Ընկերությունը պետք է համապատասխան ձևով ստուգի Առևտրային կետերի պրոդուկտները, ծառայությունները և մարքեթինգային նյութերը, ինչպես նշված է «*Visa/*Master *համաշխարհային բրենդի ձեռքբերողի ռիսկի չափանիշներում*»: Հավանական խաբուսիկ մարքեթինգային գործունեություն իրականացնող նման Առևտրային կետերի օրինակները բերված են ստորև՝

1) Առևտրային կետեր, որոնք խթանում են արտադրանքը՝ օգտագործելով անվճար փորձարկման շրջան: Այս դեպքում սպառողները գրեթե ժամանակ չունեն վերադարձնելու ապրանքը՝ մինչև գործարքի դիմաց վճարման գանձումը առանց քարտապանի իրազեկման և համաձայնության, ինչը հանգեցնում է Քարտապանի շփոթության և բողոքների:
2) Առևտրային կետեր, որոնք ներգրավված են այնպիսի գործողությունների մեջ, որոնք հայտնի են «տվյալների փոխանցում» անունով՝ տրամադրելով Քարտապանի տվյալները այլ ընկերությունների առանց քարտապանի իմացության և համաձայնության:
3) Առևտրային կետեր, որոնք Քարտապաններից պահանջում են նշել, որ վերջիններս չեն ցանկանում մասնակցել լրացուցիչ գործարքներում և հետագայում Առևտրային կետից ստանալ լրացուցիչ ապրանքներ: Այս ընթացիկ վճարների մասին մանրամասն տեղեկատվությունը հաճախ մանր տառատեսակով է ներկայացվում կամ նման տեղեկատվությունը կարելի է գտնել միայն հետևելով համապատասխան հղմանը, որը հաճախ շատ փոքր նշված վանդակների տեսքով է լինում և անտեսանելի է Քարտապանների համար, երբ վերջիններս պատվիրում կամ հաստատում են իրենց գնումները:
4) Կեղծ Առևտրային կետեր, որոնք ստեղծվել են նվիրատվություններ հավաքելու համար:
5) Կեղծ Առևտրային կետեր, որոնք հանդես են գալիս որպես պաշտոնական պետական կայքեր:
6) Առևտրային կետեր, որտեղ օգտագործվել են կեղծ գովազդներ՝ աստղերի մասնակցությամբ:

4. Ինտերնետային խաղադրույքների սխալ կոդավորում.

Սրանք այն գործարքներն են, որոնք պատշաճ կերպով չեն նույնականացվել և չեն պարունակում Visa/Master միջազգային բրենդի գործարկման կանոնակարգերով պահանջվող տվյալների տարրերը: Visa/Master միջազգային բրենդի գործարկման կանոնակարգերով ինտերնետային խաղադրույքներով զբաղվող Առևտրային կետերին պետք է պարտավորեցնել կիրառել ներքոնշյալ ավտորիզացման տվյալների տարրերը իրենց գործառնությունները ճիշտ նույնականացնելու համար:

Նույնականացնող համար	Նկարագրություն
MCC 7995 (Դաշտ 18)	Խաղադրույք՝ ներառյալ վիճակախաղի տոմսերը, խաղային ֆիշկաները, ձիավազքը, ավտոարշավը
Պրոցեսինգային կոդ 11 (Դաշտ 3)	Ոչ կանխիկ (quasi-cash)/ինտերնետային խաղադրույքային գործառնություն
POS պայմանի կոդեր 01,08,59 (Դաշտ 25)	Քարտը բացակայում է/փոստային/հեռախոսային պատվեր/էլեկտրոնային վաճառք

5. Լուսանկարների, տեսապատկերների, համակարգչային պատկերների, մուլտֆիլմերի, իմիտացիոն մոդելավորումների կամ այլ զանգվածային լրատվական միջոցների (գործունեության) գնում կամ վաճառք, որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում՝

1) Մանկական պոռնոգրաֆիայով,
2) Անասնապղծությամբ,
3) Բռնաբարությամբ (կամ որևէ այլ սեռական վարքի դրսևորմամբ),
4) անձի մարմնի մասի անդամահատմամբ (խեղաթյուրմամբ):

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Հավաստագրման-պատասխան կոդերի աղյուսակ

(Authorisation response codes)

Գործարքը կատարված է համարվում միայն **«000»** պատասխան կոդի և հավաստագրման կոդի առկայության դեպքում

Մերժված կտրոնը տրվում է հաճախորդին և անկախ ամեն ինչից համարվում է **ՉՀԱՍՏԱՏՎԱԾ**

000	հաստատում	APPROVED
104	գործարքը մերժված է, **արգելափակված** քարտ	PIN-TRIES EXCEED.
103	գործարքը մերժված է, դիմեք թողարկող բանկին	CALL ISSUER
119	սխալ գործարք, համակարգի անվտանգության խախտում	SECURITY VIOLATION
903	գործարքը մերժված է, կրկնել գործարքը	RE-ENTER TRANS.
204	առգրավել քարտը	PICK-UP CARD
101	գործարքը մերժված է, ժամկետանց քարտ	EXPIRED CARD
106	գործարքը մերժված է, գերազանցվել է PIN կոդի մուտքագրման թույլատրված քանակը	PIN-TRIES EXCEED
206	գործարքը մերժված է, գերազանցվել է PIN կոդի մուտքագրման թույլատրված քանակը	PIN-TRIES EXCEED
208	առգրավել քարտը	PICK-UP CARD
209	առգրավել քարտը	PICK-UP CARD
203	առգրավել քարտը	PICK-UP CARD
202	գործարքը մերժված է, նման համարով քարտ գոյություն չունի	INVALID CARD
920	գործարքը մերժված է, բանալիների խնդիր	INVALID CARD
117	գործարքը մերժված է, սխալ PIN	INCORRECT PIN
125	գործարքը մերժված է, նման համարով քարտ գոյություն չունի	INVALID CARD
111	գործարքը մերժված է, նման համարով քարտ գոյություն չունի	INVALID CARD
Z3	գործարքը մերժված է, կապի բացակայություն	-
200	գործարքը մերժված է, նման համարով քարտ գոյություն չունի	INVALID CARD

902	գործարքը մերժված է, կրկնել գործարքը	RE-ENTER TRANS.
116	գործարքը մերժված է, անբավարար միջոցներ	INSUFFICIENT FUNDS
109	գործարքը մերժված է, սպասարկման կետի նույնականացման համարը սխալ է	INVALID MERCHANT
107	գործարքը մերժված է, դիմեք թողարկող բանկին	CALL ISSUER